ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

3. ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿՔ. — Ըստ երկրաբանական գրիչն աշխարհս Հայաստան Ճահապէս կոչի Լեռնակղզի՝ յաւագագոյն աշխարհագրէ ժամանակիս (1), և արդարև հանդերձ սահմանակից աշխարհաքն՝ Փոքր Հայոքք, Կովկասաւ և Պարսկաստանեօք ամբառնայ 'ի միջի ծովուցն և ծովատարած դաշտագետնին Միջագետաց՝ բարձրաւանդակ մի մեծ, 3-8000′ (2) 'ի բարձրութիւն. կուտակեալ ժայռաձեւ կոհակօք լերանց, որք ուրեք ուրեք երկպատիկ ևս առաւել վերամբառնան 'ի հարթակողմ երեսաց նորուն, բարձրագոյնք լինելով քան զամենայն աշխարհս արևմտեան Ասիոյ, որում գագաթնանայ հրակայակոյսն Մասիս 16254′ հասակաւ: Աչեձեւ ստորոտք պարաձիգ լերանց և միջոցք անպարիցն՝ դրծեն զառանձին բարձրաւանդակսն կամ զընդարձակ լեառնադաշտս և լեռնահովիտս. որպիսիք են յարևմուտս հիւսիսոյ աշխարհիս՝ Ճորոխայ դաշտն 6-7000′. Ախալցխայն յելից նորա՝ 3000′. և դաշտք Կարնոյ 5750-6000′, Երզնկայն 4-5000?, Բասենոյ 5000′, Շուշար և Թէքման 5300-5500′. որոց վասն Ա աշխարհն Հայոց՝ յորում պարագրին դաշտքս՝ անգստին 'ի վաղ ժամանակաց Բարձր կոչեցաւ Հայք, զոր և հին աշխարհագիրս մեր "Բարձր՝ ոչ միայն քան զՀայք, ,, ասէ, այլ եւ քան զամենայն երկիր. վասն որոյ ԿԱ- ,, ՏԱՐ ԵՐԿՐԻ կոչեցին զնա ,,. — Դաշտն Խարբերդու կամ Դ Հայոց 3000-3300′. — Այրարատեանն ընդարձակ դաշտ 'ի բաղում բարձրաւանդակս զանազանաչափս արոհեալ 'ի լերանց, որպէս Երասխայն 2750-3500′, Շիրակայն և Վանանդայ 4300-5200′, հիւսիսային Արագածոտան ց'6300′. — Արևելեան Եփրատայ բարձրաւանդակն՝ որ է Մուրատ գետոյ կամ Պայէզիտայ 4500-5000′. — Մշոյ դաշտն 3500′. — Տոսպայն այսինքն արևելից և հարաւոյ Վանայ 6000-6500′. Աղբակայն 7500. — Արտազու կամ Մակուայ 5000′. Սեւանայ լեռնահովիտքն 6-6500′. և 'ի հարաւոյ սորա վերագոյն ամենայն բարձրաւանդակացն Հայոց 'ի հիւսիսակողմն Գարապաղու՝ լեռնակոհակ երկիր իբր 120 մղոն շրջապատաւ բարձր 8500′, աւելի և պակաս: Ընտագոյն է արևմտեայ հարաւային կողմն աշխարհիս սահմանակից Միջագետաց, սակայն և այն 1600-2000′ բարձր. իսկ արևելեայքն հարաւայինք որ 'ի Քրդաց կողմանս՝ կարի բարձունք են 5-7000′. բարձր է և Արտպատական աշխարհ որ յարևելից Քրդաց՝ իբրև 4-5000′:

4. ԴԱՇՏՔ. ԽՈՊԱՆՔ. — Ի բարձրաւանդակսն բովանդակին և արդաւանդահող դաշտքն Հայոց, յորս ընդարձակութեամբ և հարթութեամբ նշանաւոր են Բասենոյ և Շիրակայն և Կարնոյ, Մշոյ, Խարբերդու, և Երզնկայ. և ընդարձակագոյն քան զնոսա Դաշտն Ամդայ: Ընդ մէջ Ալաշկերտու և Մուրատ գետոյ և Բասենոյ են դաշտածաւալ երիզուտքն Թօրլու, Գաբա-Եաղը, և այլն: Բայց բուն ընդարձակածաւալ դաշտային և խորանիստ երկիր է Ուռի աշխարհ և Աղուանից աշխարհն զափամբք արևելեան Կուրայ, 'ի կողմանց Գանձակայ ցԵրասխ գետ, և աստի 'ի վայր՝ Մուղանն անապատ երիզուտ ցսահմանս Թալիշայ. որով լինի ընդ երկայնն 'ի հարաւոյ ընդ հիւսիս իբրև 120 մղոն, և ընդ լայնն՝ յելից 'ի մուտս յախանց Կասպիականին ցլեռնակողմանս Արցախոյ, այսինքն ցսահմանն Շուշեայ, ոչ պակաս քան զ'100 մղոն, բայց հիւսիսակողմն անձուկ 25-30 մղոնաւ չափ. այլ և 'ի Գանձակայ և 'ի վեր՝ սակաւուք 'ի բուն հայակողմն Կուրայ որ է յայնմ, և յոլովագոյն յահեկէն 'ի բուն աշխարհին Աղուանից, ընդ մէջ գետոյն մեծի Կուրայ և օժանդակաց նորուն՝ Եօռայ և Ալազանի՝ ձգին խոպան դաշտքն Գարաճա և Ռոֆոպոր ('ի հնումն Բալասական դաշտ), մինչև 'ի կողմանս Սղնախայ և Կախեթու, ցածագոյն պարուք լերանց կարեալ ընդ երկայնն զուգահեռաձև. զոր և մարթի է զերկիրս զայս արձակածաւալ իբրև 10000 մղոն քառակուսի՝ կոչել մեծ Դաշտ և Ընտպատ Հայոց, բայց ոչ անդալար և անշէն որպէս զաւաղուտ անապատս:

5. ԼԵՐԻՆՔ. — Բովանդակ աշխարհն Հայոց 'ի միջի կրկին մեծաց պարուց լերանց արեւմտեան Ասիոյ կայ, Կովկասայ ըստ արեւելից հիւսիսոյ և Տաւրոսի ըստ արեւմտից հարաւոյ, որոց և ոստս իսկ ասացին ոմանք զամենայն լերինս Հայոց. որք ուրեք աղնաղնեալք են և ուրեք կարճաձիգք. և բաղումն է զի անխաղացք և մեկնակք չեղջաձեւ ամբարձեալք: Մարթի է իբրև 'ի տան պարս և 'ի կոյտս տրոհեալ զլերինս Հայոց, անուանելով այսպէս. — Ա. ՊԱՐ ԽԱՂՏԵԱՑ կամ ՊՈՆՏԱԿԱՆ լերանց, որք յարևելից և 'ի հարաւոյ Սեաւ Ծովուն՝ 'ի բաժնին Հայոց յարևմտեան հիւսիսի գործեն բաղուկս զուգահեռականս, և անջրպետս Ճորոխի և Եփրատայ. 'ի հիւսիսակողման պարուս են լերինք Պարխարայ յորս բարձրն խալաթար կամ Վարսամպէ (որ է Վարշամակ) իբրև 12000′ 'ի կողմանս Համշինու, այս բաղուկ երկայնեալ պատի զՀարաւոյ Պոնտոսի. 'ի հարաւոյ սոցին Լերին Սպերս և Բաբերդու, յորոց միջի խաղայ Ճորոխ, բղխեալ 'ի Գոհանամ լեռնէ բարձուէ. 'ի հարաւոյ սոցա երրորդ բաղուկն Կոֆայ լերանց (Քոփ տաղ) որք յարևմտակողմն սահման հատանեն ընդ Փոքր և ընդ Մեծ Հայք, և բարձրագոյնք են 'ի համօրէն պարուն: — Բ. ՏԱՏՈՍ լերինք որք յիշին 'ի նախ-

(1) Ռիդդեր Գերմանացի, Ritter.

(2) Այսինքն յերից ցուրթ հազար ոտնաչափ. և չափ ոտիդ է դաղղիականն կամ Բարիզու, որ է 144 գծաչափ կամ 0,32484 մեդրի. իսկ մղոն զաշխարհագրականն վարեմք 'ի տեղագրութեանս յայսմիկ, որ է $\frac{1}{60}$ աստիճանի միոյ, կամ 5702 ոտք, այսինքն 1852 չափ (մեդր) դաղղիական: